

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՀՎԱ-ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԵՐՄԱՆԻ ՄԵԼԻՔ-ԿԱՐՍԳԵԶԵԱՆԻ

(Շարունակութիւն¹⁾)

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

ԲԵՐԼԻՆԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ²

Որ քաղաքում	Տիմնարկութիւններ	որբերի թիվը
Աւրֆայ (Տաճկաստ.)	5 որբանոց, 1 արհեստանոց,	300 որբ
	1 հիւանդանոց բնակիչների համար, 1 մասնաւորապէս որբանոցի զաւակների համար և 1 գեղագուն:	
Դիարբեկիր (Տաճկ.)	1 որբանոց	120
Աւրմիայ (Պարսկաս.)	1 ,	80
Խոյ (Պարսկաստան)	1 ,	136
Թուշուկ (Բուլղար.)	1 ,	20
Վարնա (Բուլղար.)	Մուադիբիւն կայ բանալորբերի մի ասկաստան:	
		654 որբ

¹Տես «ԱՄՊԵՐԸ» 1899, № 11-12.

² Թւերը քաղաքում ենք Բերլին—Լենցընի օրգանից. «Aus der Arbeit des armenischen Hilfswerks». Nov. 1899 § 1.

Փ Ր Ա Ն Կ Փ Ո Ւ Ր Մ Ի Ո Ր Բ Ա Ն Ո Ր Ն Ե Ր Ը (բ ո լ ո ղ ն է լ Տ ա մ կ ա ս տ ա ն ու մ)

Որբեն	Հիմնարկութիւններ	Որբերի թիւը
Բերեկ (Պողոսի մօք)	1 որբանոց	95 աշխիկ
Մեսերից	4 որբանոց, մի հիւանդանոց և մի ապաստարան այրի և հիւանդանոց կանանց համար	155 աշխայ
Հիւսեննիկ	3 որբանոց	10 աշխայ
Պիրջենջ	2 որբանոց	31 աշխիկ
Պալու	4 որբանոց	40 աշխայ
Մարաշ	3 որբանոց և 1 արհեստանոց	12 աշխիկ
Վան	2 որբանոց	80 աշխայ
Ագորայ բէյ	2 որբանոց, այս երկու որբա-	70 աշխիկ
(Ամասիայի մօք)	նոցներին պատկանում է և ահա- զին գարածութեան մի կոմոր հող (4.000 գերմ. մորդէն) և ա- շահաս որբերի բնակութեան հա- մար։ Այսուել կան փականքի, ճախարակագործութեան և ա- շխատի գործարաններ։	100 աշխիկ
Հաճին	1 որբանոց	100 որբ
		<hr/>
		Բնդամէնը . . . 1.077 ³ որբ

Եթէ այս գումարին աւելացնեք և այն որբե-
րի թիւը, որսնք այս կոմիտէի միջոցով բերւած էն
Գերմանիա և գեղաւորւած էն զանազան գերմանա-.

¹ Խնչպէս ոեւսնում է ընթերցուը, մի քանի քաղաքների վերաբե-
րեալ ցոլց չէ ուրւած որշաների և աշխիկների թիւը առանձին, ուստի մեզ
մնում է ցոլց ուրւած սեռերի թիւը առանձին, ուստի մեզ
ամեններն չէ ցոլց ուրված սեռերի թիւը առանձին։

Վան ընդունիքներում	65 4 որբ
կը սփանանք. . .	1.142 5 որբ
Ուրեմն ներլ. և ֆրանկֆ. կոմիտէները ⁶ միասին պահում են ընդամենը . . . 1.798 որբ	

Այսուել ևս կը նկարենք, որ ամբողջ Եւրոպան և Ամերիկան միասին պահում են մինչև 6000, (կամ ըստ ուրիշ աշխարհականի՝ 5000) հայ երեխաներ. արդեօք սոքա ամենքը որը են, այդ յայտնի չէ մեզ:

Այս որբ-ապաստարանների գլխաւոր հսկողները, փեսուչները գերմանացիք, կամ, աւելի ճիշդն ասած, ոչ-հայեր, եւրոպացիք են. իսկ երկրորդական պաշտօնները ուրում են և հայերին: Սոցա գլուխում ենք հետեւեալ պաշտօններում—վարժապետի (հայերէն լեզւի), վերակացուի, «Փան ծնողների»—Hauseltern (սրբնք, ինչպէս երեւում է, նման են «Փան մշակներին») և այլն:

ԿԵՍՆՔԸ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՒ ՈՒՍՈՒՄԸ

Այսուել գործադրում այն է սկզբունքը, որ երեխան ըստ կարելոյն պիորի անէ ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է նորա կեանքի համար: Հետեւեալ ցուցակը (Բեթեկի աղջկերանց որբանոցի), որը նկարագրում է որբանոցի մէջ պիոր կարգը և կեանքը, պարզ ցոյց է պայիս այդ:

Ժամ՝ 6¹/₂-ին (առաւօրեան) անկողնից վերկենալը: Մեծերը լւանում են փոքրերին և հազցնում են նոցա: 2 մեծ աշակերտներ հետեւում են միջակների երես լւանալուն և 2 ուրիշ մեծերը մաքրում են դպրոցի սենեակը:

Ժամ՝ 7¹/₄ Նախաճաշիկ:

⁴ Այդ պարահել է անմիջապէս կորորածներից լեռով, երբ կոմիտէները դեռ չունէին ապաստարաններ Արևելքում: Այս 65-ի առիթով լավում է համապատասխան կոմիտէն, որ նա «ավ ևս չի բերում որբեր գերմանիա»:

⁵ Բ=Բերլինի, Ֆ=Ֆրանկֆուրտի:

⁶ Աեւելի ճիշդ կը լինէր ասել «ապաստարան են դեմք», որովհետև կիշալ 65 որբերը կոմիտէների հաշտով չեն պահում:

Ժամ 7 $\frac{1}{2}$ Առաւորեան աղօթք:

, 8—11 Դասեր I և IV դասարաններում:

, 11—12 Ասեղնագործութիւն IV դասարան և խաղեր I դասարան:

, 8—10 Տնային աշխատանքներ (Hausarbeiten) (II և III դասարան աշակերգներ):

4 երեխայ մաքրում են ճաշի սենեակը, ափսէները և բաժակները:

3 երեխայ մաքրում են բոլոր լամպարները:

3 , օգնում են ութոյելու:

2 » օգնում են խոհանոցում:

10 , մաքրում են սանդուխքները և շաբաթը մի անգամ լւանում են:

8 , սրբում են կօշիկները } փոփոխաբար ամեն:

8 » մաքրում են կանաչեղինը } մէկը 1 ժամ:

2 , մաքրում են կլողէպները:

2 , աւելում են դասարանները (այն աշակերդների համար, որոնք պարագաւում են այսպիսի կէսօրից յեփոյ: Սորա մասին յեփոյ):

6 , կարկատում են:

Ժամ 10—12* ովքեր ժամը 10-ից յեփոյ զնային աշխատանքը վերջացնելում են արդէն, յասերն են պարագաւում (Schularbeit) և ովոր այս էլ է վերջացնում, օգնում է կարկատանքի զործում կամ զբաղւում է ասեղնագործութեամբ IV դասարան աշակերդն. Հետո

Ժամ 12—1 $\frac{1}{2}$, ձաշ և ազար ժամանակամիջոց:

, 1 $\frac{1}{2}$ —3 $\frac{1}{2}$ Դասեր IV, III և II դասար. մէջ:

, 3 $\frac{1}{2}$ —4 Հանգստութիւն: Տալիս են հաց և կաթ:

, 4—5 Դասեր II, III և IV դասարաններում:

, 5—6 Դասեր II և III դասարաններում: IV դասարանի աշակերդները պատրաստում են իրենց դասերը:

, 6—7 $\frac{1}{2}$ Ընթրիք, աղօթք և ազար ժամանակ:

, 7 Մեծերը բանում են փոքրերին քնացնելու:

, 7 $\frac{1}{2}$ —8 $\frac{1}{2}$ IV և III դաս. աշակերդները պատրաստում են իրենց դասերը:

Ժամ 8 Քնում են II դասարան աշակերտները:

» 8^{1/2} Քնում են III և IV դասարան աշակերտները:

Տնային աշխատանքը փոխում է ամեն շաբաթ:

Որբանոցները, ինչպէս գետնում է ընթերցողը, միւնոյն ժամանակ և ուսումնարաններ են: Պատկեր գոլու համար, թէ ինչ ուսում են սփանում նոցա մէջ հայ երեխանները, կը բերենք ներեկի աղջկանց որբանոցի դասերի ցուցակը⁸:

	1 դասար.	2-ր դաս.	3-ր դաս.	4-ր դաս.
Կրօն.	3 ժամ ⁹	4 ժամ	4 ժամ	6 ժամ
Հայոց լեզու	3 ,	4 ,	4 ,	4 ,
Գերմաներէն	4 »	4 ,	4 ,	4 ,
Ֆրանսերէն			2 ,	4 ,
Անգլիերէն				2 ,
Թուրքերէն				2 ,
Պարմութիւն				2 »
Աշխարհագրութիւն			1 ,	2 »
Թւարանութիւն	2 ,	2 ,	2 ,	3 ,
Երդեցողութիւն	2 ,	2 ,	2 ,	2 ,
Նկարչութիւն	2 ,		1 ,	1 ,
Զեռքի աշխատանք	4 ,	4 ,	4 ,	4 ,
Ասեղնագործութիւն				6 ,

Ընդհանուր ժամենք . 18 ժամ 20 ժամ 24 ժամ 42 ժամ

Այս ցանկից երեսում է, որ գերման ընկերութիւնը (Հիլֆսբունդ¹⁰) գոլիս է, գոնէ ինչ վերաբերում է աշխատանքներին, իւր հայ որբերին աւելի գործնական, քան գեսական գուգելիքներ: Ահա այն առար-

⁸ Նախընթաց թւերը վերցրած ենք Ֆրանկֆուրտի կոմիտէի մի թոռուց/կ թերթից. նույն արտադրած է և իւր օրգանի. «Mittheilungen aus dem Orient vom deutschen Hilfsbund für d. christliche Liebeswerk im Orient». 1899 № 7.

⁹ Unsere Waisenhäuser im Orient. Zweiter Bericht des «Deutschen Hilfsbundes für Armenien». 1897 էջ 18. Այս միակ ցուցակն է, որը մեզ չաջողւել է գոնել. Աւելի շահեկան կը լինէր ծանօթանալ, ինչպէս աշխիկների անպէս և որշաների դպրոցների նոր ցուցակների հետ. բայց Հիլֆսբունդի բոլոր հրաժարակութիւնների մէջ չըկարողացանք աշուղիսին գոնել:

կաները, որոնք առաջի դասարանից մինչև վերջինը անընդհատ ուսուցանում են. զրօն, հայերէն, գերմաներէն, թւարանութիւն, երգեցողութիւն, ձեռի աշխատանք. իսկ պարմութիւնը, նկարչութիւնը, աշխարհագրութիւնը, ֆրանսերէնը, անգլիերէնը սկսում են բարձր դասարաններից, այն էլ սակաւաթիւ ժամերով (բացի ֆրանսերէնը): Բացի այդ շահեկան է համեմատել զրօնի, գերմաներէնի և հայերէնի ժամերի թւերը: Կրօնը ունի 17 ժամ, գերման. լեզուն—16, հայերէնը—15: Այս վերջին համեմատական թւերի վերայ որ և է մէկը գուցէ և կարողանար ցոյց տալ, ինչպէս ապացոյց այն կասկածանքների հիմնաւորութեան, որոնք տարածւած են առհասարակ մեր հասարակութեան մէջ, այսինքն, 1) որ Հիլֆսրունդ՝ ձգում է իւր հիմնարկութիւններով բողոքական դարձնել հայերին և 2), որ նա մրադիր է հայ որբերից դասրիարակիւ ոչ թէ հայեր, այլ գերմանացիք: Թէպէտ ես չեմ կարծում, որ Հիլֆսրունդ՝ դործիշները իրենց հայկական օժանդակութեան գործում շեկավարւեն լոկ մարդասիրական զգացմունքներով ազատ որ եւ է միտումից, այնու ամենայնիւ կ'անդեմ, որ յիշեալ կասկածները գոնէ այն սեսակետով և պարզաբանութիւններով, որոնցով նոքա առհասարակ արդարակում են—սիւալ են: Օգնութեան միութիւնը անշուշփունի բողոքական ձգումներ Տաճկա-Հայաստանում, բայց այդ կրօնական ձգումները բոլորովին այլ տեսակի են, քան թէ մինք նոցա երեւակացում ենք. այդ կ'փորձնք պարզել յետոյ, առայժմ կը բերենք գերմանական ընկերութիւնների հրատարակութիւններից միքանի քաղւածքներ, այդ երկու կէտերը՝ հաւաքառարան թեան (պրոդելիտիկմ) և ապաազգայնացումի (dénationalisation) հարցերը լուսաբանելու համար:

Սկսենք վերջինից:

ԱՊԱԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԻ ՀԱՐՑԸ: Հիլֆսրունդ՝ հրատարակութիւններից և նորա գործիչների նամակներից չի երեսում, որ հայ որբերի դասրիարակութեամբ նա կամենար գործել հակահայկական ուղղութեամբ. հայ որբերը զրիել իրենց ազգութիւնից, իսկը իրենց ազգից—այդպիսի ձգումներ բոլորովին բացակայում են այսորեւ ընդհակառակը, Օգնութեան միութեան գործիչները դրական կ'երպով ասում են, ինչպէս կ'արենինք ներքեւ, և աշխարում են որպէս

սկզբունք անցկացնել հետեւեալ գաղափարը. հայ որթերը—հայ եւ եւ պիտի հայ մնան. ապագայում նոքա պիտի գործեն իրենց ազգի եւ հասարակութեան օգտին:

Յալրնի ամերիկական միսիոնար Դ.-Ռ Խայնոլդս (Reynolds), որը դասնեակ դարիներ հայ երեխաների դասութարակութիւնով է զբաշւել Տաճկասրանում և որին գերմանական Ֆրանկֆուրտեան կոմիտէն յանձնել է առայժմ իւր Վանայ որբանոցի ղեկավարումը, գրում է. «Ամենից առաջ մենք ցանկանում ենք դասութարակել երեխաներին մաքուր և օգուաւէս կեանքի համար և որբան կարելի է կրթել նոցա որպէս հայերի, որպէս զի, եթէ պայմանները այդ թույլ կ'առան, նոքա վերադառնան իրենց դները առանց դժւարութեան։ Մեր դասութարակութիւնով յոյս ունինք միջոց ուալ նոցա կրթողական կերպով ազդելու իրենց շրջանի վրայ»¹⁰:

Նոյն գաղափարը, այսինքն, որ որթերի կրթութեան մէջ ինկարի է առնեում դոցա ապագայ գործունէութեան հայկական շրջանը, երևան է գալիս Դ.-Ռ Բելկի (Belck) և Դ.-Ռ Լեհմանի (Lehmann) հաշւեգութիւնից (Bericht): Այս անձերը, որոնք Վանի սհապաձե դրութիւնների ուսումնասիրութեան համար այդ քաղաքում երեք ամիս (1899) անցկացրին, հիւր են եղած Դ.-Ռ Խայնալդսին և իրենց հաշւեգութեան մէջ յիշել են նաև որբանոցների գործունէութեան մասին։ Կարելի է յուսալ, գրում են սոքա ի միջի այլոց, որ եթէ այսուել (այսինքն, յիշեալ դպրոցներում) դասութարակւող դղաները և աղջիկները, որոնցից ոմանք բոլորովին անուսում են եկել դպրոցը, կ'վերադառնան (յեպոյ) իրենց գիւղերը, որպէս ուսուցիչներ, արհեստաւորներ և հաւաքարիմ քրիստոնեաներ, դոքա դրդիչ օրինակ կ'լինին իրենց հայրենակիցների համար և օրհնեալ միջոց ամբողջ ազգի մրաւոր և բարոյական մակերեսոյթը բարձրացնելու համար»¹¹։ Մենք չենք ուզում, զրւած է ուրիշ դեղ, երեխաներին բարձր ուսում դրալ, որ նոքա յաճախ սրանում են ամերիկական վարժարաններում. ամենապլիսաւորը, ինչ որ պակաս է, այդ—հմուգ ար-

¹⁰ Հաբաթական.

¹¹ Wan und das elsass-lothringische Waisenheim daselbst. 1897 երես 25.:

հետաւորներն են: Այդ նպատակով Մեսսերէյում սարքել ենք մենք չափահաս գլաների համար արհեստանոցներ, ուր նոքա սովորում են կօշկակարութիւն, դերձակութիւն և արաշճագործութիւն՝¹²: Այս խօսքերը կողմանակի կերպով ապացուցանում են նոյն ցանկութիւնը—հայ որբերը կրթել հայերի համար և համաձայն իրենց պահանջներին: Հետաքրքիր է նոյնպէս, որ աս սորոր Երնսոր Լոհմանը, Թրանկիվուրսի կոմիտէի վարիչը, այցելելով 1899 թ. սկզբին Փոքր-Ասիայի գերմանական որբանոցները, իւր նամակներից մէկում, (Յիւասից), դիմում է հայ որբերի գերմանական ժնողներին (սոցամասին փես Մուրճ 1899 № 11-12) խորհուրդ է փալիս սոցացա, որբերին այլ ևս պարզեներ չուղարկել Գերմանիայից: Արակս ամենալաւ պարզեւ, ասում է նա, «Ես կառաջարկեի ուղարկել փող մեր որբերի ապաստարանների վարիչներին, որպէս զի սոքա գնեն երեխանների համար հայերէն դրքեր, որոնք կը մնան նոցա համար իրեւ զեղեցիկ ցիշափակարան նոցա ամբողջ կեանքի ընթացքում...»¹³: Աւելացնենք այսորեղ, որ այն հանգամանքը, թէ Նիլֆորունդը, ինչպէս երևում է, գերադասում է շարիքին ուղարկութիւն ուսում, քան թէ քչերին բարձրը, մեր կարծիքով, նոյնպէս ապացուցանում է, որ «Ժմանդակութեան միութեան» գործին ինկարի ունին դաձկան բնակիչների պահանջները, ամենաուրարտական կարիքները, և ոչ թէ իրենց որ և շահերը: Դա գնադասուած է, որպէս սկզբունք, և ի հարկէ հարկաւոր դէպքում, ընդունւած է, որպէս սկզբունք, և ի հարկէ հարկաւոր դէպքում, գերմանացիք միջոց են դալիս հայ երեխաններին շարունակել իրենց մկանուր զարգացումը: Դեռ 1897 թ. պաստոր Բրոկէս-ը (Brockes) գրում էր Թիւրքիայից Բերեկի որբանոցի մասին: «Առաջի ըստ մեր հաշւի—վերջին) Դասարան մէջ 8.ից մինչև 14 դարեկան երեխաններ են: Այս դասարան մէջ հաւաքել ենք մենք բոլոր ընդունակ և աշխատասէր երեխանները, որոնք հիմք են դալիս հաւարարու, որ արարձը¹⁴ ուսումը նոցա համար արգասաւոր կը լինի: Իմ կարծիքով, ոչ թէ երեխանների ծնողների (վախճանւած) դասակարգը,

¹² Zweiter Bericht über die Arbeit d. Elsass - Lothringischen Hilfscomités in der türkischen Provinz Wan 1899. § 15.

¹³ Աւրիւրը դես ծանօթ. 8. էջ 33.

այլ երեխաների ընդունակութիւնը և աշխարհասիրութիւնը վճռողական պիտի լինին վճռելու համար թէ հարկաւոր է արդեօք դալ նոցա բարձր ուսում, թէ ոչ¹⁵; նոյն 1897 թ. գերմանական «Börsenskuriere» թերթի կ. Պոլսի թղթակիցը, նկարագրելով այդ թերթի մէջ Բերեկի որբանոցին իւր դաւած այցելութիւնը, ի միջի այլոց ասում է. «Համաձայն իրենց ընդունակութիւններին՝ երեխաներից պարրապում են վարժուհիներ, կամ աղախիններ (Dienerinnen), և մեծերը արդէն աշխարում են գնարարութեան մէջ»¹⁶; Ո րեմ որբանոցների վարժապետների և վարիչներից երևում է, որ պատրոր Բրոկեսի կարծիքը և Բերեկի որբանոցում գործադրուղ սկզբունքը ընդունած գաղափար է բոլոր որբանոցների դպրանոցներում: Կը բերենք մի քաղածք Վանայ որբանոցի կառավարի: Դ-ր Ռայնոլդսի նամակից առ էլսադ-Լոթրինգիայի Ճիւղիուէն. «Եւելի ընդունակ դաշներից ոմանք ամբողջ իրենց ժամանակը պիտի ն: իրեն ուսման, որպէս զի յեփոյ, երբ երկրի քաղաքական դրութիւնը թողլ կ'ուայ, նոքա կարողանան իրենց գիւղերում ու սումնարաններ բանալ և ուսուցիչներ լինել: Երեխաների մեծ զանգածքը գործադրում է իւր ժամանակը փոփոխաբար ուսումի, և արհեստի վրայ. նախաճաշից յերոյ կարճ դադար. սորանից յերոյ մի մասը գնում է արհեստանոցները, միալով մինչև ճաշի ժամը: Այսրեղ սովորում են նոքա ոստայնանկութիւն, դերձակութիւն, հացթխութիւն, դարբնութիւն և կաշեգործութիւն. նոքա իրենք պատրաստում են իրենց շորերը թելից սկսած մինչև գործածը, իրենց ուրնամանները՝ կաշւից սկսած մինչև կարարեալ կոշիկը: Այն մասը, որ ուսումնարան է այցելում, սովորում է (այս արհեստները) օրը մի ժամ և յերոյ ժամ 9—12 անցնում է դասարունները... մենք չենք ձգտում դալ նոցա մեծ գիւղութիւններ, մենք ցանկանում ենք միայն գիւղութիւնների դարերը սովորեցնել նոցա—կարդալ, դրել, փոքր ինչ թւաբանութիւն, աշխարհադրութիւն, թիւրքերէն և գլխաւորապէս Աւելարանը...»¹⁷:

¹⁵ Ալբիւրը տես ծանօթ. 8. № 5. էջ 33.:

¹⁶ «Բարձր ուսումը» պատրեղ պիտի հասկանալ ինչպիսի ուսում, որը ակզմնականից աւելի բարձր է:

¹⁷ Տես ծանօթ. 8. էջ 0..

Այսքան առ այժմ ևապատգայնացումից մասին Առաջ բերած քաղուածքները բոլորն էլ թեր են, և եթե մենք չենք բերել ոչ մի կտոր, որը այդ սեսակէտից Հիլֆրունդի դէմք խօսած լինէր, այդ այն պատճառով է, որ մենք նորա գործիչների նամակների մէջ ոչ մի փող չենք գտել, որից կարելի լինէր ենթադրել, թէ Հիլֆրունդը իւր գործում ձգում լինի որ և զերմանական քաղաքական-ազգային նպատակներին Այն գաղափարը, որ հայորբերի գերմանական շաստիարակումը, կամ աւելի ճիշտն ասած, որ գերմանական որբանոցները ապագայում կարող են մեծ ծառայութիւն մասուցանել Գերմանիայի արևելեան քաղաքականութեան, նորա ելեմոնական շահներին Թիւրքիայում, այդ գաղափարը արծալ ծեց առաջին անգամ 1899 թ. գարունքին, այն էլ ոչ Հիլֆրունդի, այլ մասնաւոր մարդու կողմից: (Dr. P. Rohrbach. «Deutschland unter den Armeniern». Preussische Jahrbücher. 1899, Bd. XCVI Heft 2): Բացի Դորանից, այս գաղափարը արտայացուեց որպէս պատասխան գերմանական մի քանի լրագիրներին, որոնք յարձակում էին Հիլֆրունդի վրայ, ասկէով, որ վերջինը իւր գոյութեամբ խանգարում է գերմանական քաղաքականութեանը Արևելքում:

Հիւլֆսբունդի ղէմ քաղլածքներ կարելի է գտնել միայն կրօնա-
կան, դաւանափոխական հարցի վերաբերեալ, մի հարցի, որը աւե-
լի նուրբ, աւելի դժւար լուծելի է և որի մասին բաւականին շապ-
դրեց մեր և եւրոպական մամուլը:

Անցնենք այս հարցին:

4 0 0 6 5 2 0 0 3 0

Ընթերցողը լիշտում է վերև ներկայացրած դպրոցական դասերից յուցակից, որ հայ որբերին եռանդուն կերպով կրօնի դասեր են դալիս որբանոցներում։ Հարց է առաջ գալիս— մը կրօնն է ացդ, լուսաւորչական թէ բողոքական։ Կամ աւելի լացն բժիշունած, այդ ուսումնարաններում չեն դառնում արդեօք հայ երեխաները յանհարծ, կամ փոքր առ փոքր, բողոքականներ, թեպէտ լինին նոքանակ հայ բողոքականներ, և ուրիշն այդ 2000 որբերը չեն կարող արդեօք լուսաւորչական եկեղեցու համար արդէն կարուծ համարելու

Այս հարցին վերին ասողինանի դժւար է որոշագէս պատճառ։ Խանել՝ Հիլֆսբունդի զործիչների նամակները, նիստերի արձանագրութիւնները, նորա բոլոր պարբերական և ուրիշ հրապարակութիւնների ընթերցումը չի տալիս հետազոտողին պարզ փառառութիւն, որպէս զի կարելի լինէր պատասխանել բացարձակօրէն, «ոչ» կամ «այս»։ Այս հանգամանքը Դրշեց ինձ Դիմել ուղղակի պ. Դր Ռոռբախին (Dr. P. Rohrbach), որ թէպէս Հիլֆսբունդի ($=$ Օգնութեան ընկերութեան) գործիւը չէ, բայց կողմնակի կերպով շատ է գործում յօգուտ «Օգնութեան ընկերութեան» և մանրամանաբարձանօթ է դորա գործերի հետ¹⁸: Նորա պատասխանը կը բերեմ յետոյ. առ այժմ, հաւատարիմ մնալով մեր սիստէմին, Դիմենք անմիջական աշխարհներին, այն է թէ ինչ է առում Հիլֆսբունդը ինքը։ Հարկաւոր է այսպեղ ևս նկատել, որ Հիլֆսբունդի գործողների այդ խօսքերը և կարծիքները երևան են եկել ոչ թէ իրեւ պոլեմիկայի հետեւ անք, այլ նոքա յայտնւած են եղել «Օգնութեան ընկերութեան», գործունէութեան առ թիւ ծագած պոլեմիկայից առաջ, որպէս մոքերի հասարակ փոխանակութիւն այդ գործողների միջև։ Այդ պէսք է ի նկատի ունենալ, որ ովհետեւ այդ հանգամանքը առանձին արժեք է փալիս մեր առաջ բերելիք քաղաքացիներին։

Մի բրոշիւրի մէջ (գիւս ծանօթ 11), յառաջաբանում, հեղինակը (որը պաստոր է և, ինչպէս երևում է, պիորի որ շար կրօնամոլ լինի) ի միջի այլոց ասում է. «Ոչ թէ ձնշում, այլ ազատութիւն կրօնական կրթութեան մէջ, թոյլատրութիւն մինչև անգամ (!) հայկական ժամասացութիւնները այցելիու, կարգապահութիւն, աշխատասիրութիւն, խրախուսանք թէպի ինքնուրոյնութիւնը, և ամեն բանի մէջ կրթութիւն երկրի և բնակիչների բախտաւորութեան համար—սոքա են թանկագին գեսակէտները (Gesichtspunkte): Ռոռբախը, որին ելզաս Լոթրինգի ճիւղ-կոմիտէն յանձնել էր այցելել Վանի որբերի իւր ապաստարանը, գրում է մի նամակում 15 յունւ. 1899թ. «...երկրորդը, որը առանձին կերպով արդիւնաւէր է, Դր Ռայնոլդսի (այդ որբանոցի ղեկավարողի) սկզբունքն է երե-

¹⁸ Տես ծանօթ. 8, էջ 11..

խայլոց իրօնական դաստիարակութեան նկագմամբ, թէսէպ այդ սկզբունքը միայն նորանը չէ»։ և այլն¹⁹։

Ո՞րն է այդ սկզբունքը։

Դոքու. Ռայնոլդսի նամակներից մէկում (1896 թ.) գտնում ենք ի միջի այլոյ հետեւեալ խօսքերը. «Մենք ամենեին չենք փորձում հեռացնել նոցա (երեխաներին) իրենց ազգալին եկեղեցուց. շաբաթը մի անդամ նոքա կարող են ալցելել իրենց եկեղեցու ժամասացութեանը, իսկ նոքա, որոնց խիշճը թելադրում է չայցելել, կարող են և մնալ։ Բայց մենք աշխարում ենք համզել նոցա, որ նոքա լըմբունեն Քրիստոսին, որպէս բարեկամի ((Freund) և գործեն այդ հասկացողութեամբ, որպէս զի դուրս գնան ալսորելից, որպէս փրկւած անձեր և թթվամորի սկէս գործեն իրենց հասարակութեան մէջ»²⁰։ Նոյն հեղինակը գրում էր 1897 թ. «...Նաբաթ օրը, նոցա, որոնք այդ ցանկանում են, թոյլ է պրւած այցելել հայկական ժամերգութիւնը։ Հաճելի է պեսնել, ինչպէս նոքա, իրենց շափահաս աշակերդների միջից ընտրւած, սպասներով գնում և գալիս են. բայց ամենքը պարբաւոր են կիրակւայ և չոքեշաբթըւայ ժամասացութիւններին մեր սեփական (բողոքական) մարութում մասնակցելու. և Աւելուարանի ուսուցումը օրւայ դասածրագրի պարփառորիչ մասն է։ Նոցա դաստիարակութեան նկարմամբ մեր նպագակն է մարդնանիշ անել Քրիստոսի վրայ, ինչպէս փրկութեան ճանապարհի վրայ, և համզել նոցա անձնապէս միանալ նորա հետ

¹⁹ Տես ծանօթ. 11, էջ 9. Ափառո որ, ինչպէս բերած ոռվերից, այնպէս էլ ամբողջ նամակից պարզ չէ երեսում, թէ ինչումնէ կալանում զանազանութիւնը զիտութիւնների ծաւալի մէջ, որը սրանում են «ընդուածները» և մնացածները. Պարզ չէ նոյնպէս, թէ բերած առարկանների ծրագիրը սոցանից որ մասին է վերաբերում։

²⁰ Dr. P. Rohrbach-ը անցեալ տարի մեծ ճանապարհորդութիւն է արել Տաճկահայաստանում և իւր տպաւրութիւնները նկարագրել է զանազան թերթերում, բայց դրանից ես մի տարի առաջ նա ալցելել է Կովկասը, և Անդրկասպեան երկիրները. Այդ ճանապարհորդութիւնը նա նկարագրել է «In Turan und Armenien» գրքի մէջ, որ արժանացել է որոշ ուշադրութեան. Տես դրա մասին և „Братская Помощь“ 2 իաձ.: Փրօֆ. Գերվ. Պրիզվանի Ռուսիա և Վոստօք։

(sich persönlich mit ihm in Verbindung zu setzen): Բայց մենք ամենենին չենք ձգտում անջափել նոցա իրենց ազգային եկեղեցուց։ Նոցա ապահովցրած է լազմի ազատութիւնը։ օրինակ պաս պահելը և դրա նման սովորութիւնները։ իսկ իրենց եկեղեցին յաճախելը ծանօթացնում է նոցա իրենց ժամասացութեան հերթ։ Պասի շրջան-ներում և ուրիշ Դէպքերում մենք մեր ժամերգութիւնը կարարում ենք լուսաւորչական եկեղեցու երաժշգութիւնով։ Մեր նպատակն է նոյնպէս, ինչ վերաբերում է անունդին, հագուստին և սովորութիւններին, այնպիսի կենցաղավարութիւն մոցնել (ոբբանոցներում), որ մենք չ' բաժանենք նոցա իրենց հայրենակիցներից, որպէս զի նոքա անընդունակ չինին (ապագայում) իրենց գիւղում ապրելու։ Միենոյն ժամանակ մենք դաստիարակում ենք նոցա այնպէս, որ նոքա յեպոյ գործեն ժողովրդի մէջ ինչպէս թթիւմոր։ Մենք խուսափում ենք այնպէս կըթել նոցա, որ նոքա ցանկանան հեռու ապրել այս երկրից (Հայաստանից)։ (Սորորագծումը հեղինակինն է)։ Ճնոքա հայ են և հայ պիտի մնան»²¹,

Թէ որբանոցների այս կրօնական կողմը որբան դժւար և մինչև անգամ Հիլֆսբունդի համար մութ հարց է, ապացուցանում են այն անթիւ կարծիքները և կշռադարձութիւնները, որ գրնում ենք լնկերութեան հրաժարակութիւնների մէջ։ Այդ հարցը, ինչպէս երեսում է, շաբ է զբաղեցնում նորան։ Դուք Ռայնոլդսը ինքը պարզ ասում է այդ իւր մի ուրիշ նամակում (1897 թ.)։ «...Այն, թէ ինչ Դիրք պիտի բռնենք մենք Դէպի լուսաւորչական եկեղեցին և թնչպէս պիտի ազդենք երեխանների վրայ, ինկազի առնելով այդ եկեղեցին, — մեզ բոլորիս համար վերին ասդիմանի լուրջ հարց է։ Անջափել նոցա բոլորովին իրենց եկեղեցուց, իմ կարծիքով, սիսալ քան է, և ես ձգփել եմ խուսափել դորանից։ Երեխաններին ոչինչ չի ասում ազգային եկեղեցուց հեռանալու կամ աւելարանականութիւնը ընդունելու մասին։ Բայց ես չէի ցանկանալ սիսալ դպաւորութիւններ յառաջ բերել։ Երեխանները պարտաւոր են (սորորագծումը հեղինակինն է) մասնակցել մեր բոլոքական ժամասացութիւններին և նոցա ուսուցանւում է Քրիստոնի փրկութեան գործի

²¹ Տես ծանօթ. 11, էջ 20.։

(Erlösungswerk) մասին, համաձայն Աւելարանի...²²: Ժողովրդի հետ յարաբերութիւնների մասին միստիոնարը ասում է. «Պէտք է շնորհակալութեամբ լիշել, որ վերջին տարիների ընթացքում մեծ փոփոխութիւններ եղան ժողովրդի յարաբերութեան մէջ մեզ հետ. նոքա համակրում են մեզ և մեր գործին: Ի հարկէ, դեռ չի հասել ժամանակը, երբ կարելի լինէր յանձնել երեխաների կրթութիւնը լուսաւորչական հոգեօրականութեանը և հայ ուսուցիչներին, եթէ կամենում ենք, որ ազար ողորմածութեան մասին վարդապետութիւնը նոքա ըմբռնեն և բարի գործքերը նկարեն ոչ որպէս փըրկութեան աշբիւր, այլ որպէս նորա հետեանք (wenn wir wollen, dass sie die Lehre von der freien Gnade erfassen und gute Werke nicht als eine Quelle der Erlösung ansehen, sondern als deren Frucht):*:

Այդ պատճառով շար ծանր կը լինէր ինձ համար յանձնել հայերին երեխաների դասրիարակութիւնը, որոնց ես այնպէս սիրեցի²³. Հետաքրքիր և այս նամակի պատասխանը, որը գրեց Ելզաս-Լոթրինդիակի կոմիսէի գործավարլու: «Դուք ցանկանու մէք իմանալ, զրում է նա Դր. Ռայնոլդսին, «Թէ ինչ ենք միածում մենք այդ խեղճ երեխաների դասրիարակութեան մասին: Թէպէս ես դեռ ևս չեմ հարցրած մեր (Կոմիտէի) կառավարչական արեանից, բայց առաջուց կարող եմ ասել, որ մենք լիովին լնդունում ենք ձեր գործունէութեան գինը: Եթի սիրելի կնոջ հետ դուք թողիք ամեն բան, նպաստակ ունենալով որոնել Փրկչի համար այն թանկագին մարգարիտները, որոնք մի ժամանակ պիտի փայլեն նորա թաղի վերայ. և երբ այն ցոյց է տալիս նա ձեզ այս խեղճ փոքրիկների միջոցով, պիտի մենք ձեզ խորհուրդ տանք արդեօք յանձ-

²² Տես ծանօթ. 10, Էջ, 25..

* Հայաստանեալց եկեղեցին, որպէս և ըուլոքականը, նոնապէս չի ընդունում բարի գործքերը որպէս փրկութեան ալրիւր Օրինակ, ալրոգով է գրւած Մելքիսեդէկ եպ. Մուրադեանցի «Պատմութիւն Քրիստոնէական եկեղեցւոք» (օրինակ, Էջ 140), թէն պարտաւոր ենք աւելցնելու, որ հայ եկեղեցականների մէջ մենք չենք նկարած ուղղորդութիւն ալդ մեծ վարդապետութեամբ.

ԾԱՆ. ՄՈՒԲԱԴԻ ԽՄԲ.՝

²³ Տես ծանօթ. 10, Էջ 5..

Նել նոցա լուսաւ որչական քահանաներին: Ոչ մի ժամանակի Եւ եթէ ուրիշ միջոցներով աւելի կարելի լիներ անել երեխաների նիւթական բարօրութեան համար (թէպէտ ևս շատ կասկածում եմ), այնուամենայնիւ ևս կարող եմ ձեզ միայն ասել՝ պատմեցէք նոցա, երկրային անգիտութեան այդ խեղճ գոհերին, հին-հին առակը Քրիստոսի սիրոց մասին: Որովհետեւ այսպես, այս երկրում (=էլլասում) մենք չենք կարող փեսնել նոցա, ուստի մենք ցանկանում ենք այնպեղ, վերեւ, հանդիպել սիրելի փոքրիկներին, երբ Տէրը մեզ կը կանչէ: Միայն վարահ եղք! Այսպեղ ալոթում ենք ձեզ և ձերոնց համար, և ամենը, ինչ որ դուք այդպեղ անում էք մաքուր խըլ-ձով յանուն Ասրծոյ, մեր կողմից ճիշդ կը համարւի...» ²²: Մենք Դիումամբ առաջ բերինք նամակի այն տողերը, ուր հեղինակը խօսում է երեխաների հետ այն աշխարհում հանդիպելու մասին: Հիլֆուրունդ'ի գրւածքները բոլորը լի են այդպիսի խօսքերով, պատկերներով և զգացմունքներով, և սա, մեր ցանկութեան համար՝ Հիլֆուրունդ'ի կրօնական հարցը պարզելու՝ շատ նշանաւոր կէտ է:

Եսոր բնորոշ է էլզասեան Կոմիտէի համար, երբ սա դեռ չէր պատկանում Ֆրանկֆուրտի կենտրոնին, առաջին նիստի արձանագրութիւնը: Այս նիստի մէջ նոյեմբերի 13, 1896 թ. վճռւեց մի հրաւէր (Aufruf) հրադարակել, որի մէջ պիտի նկարագրւէր հայորենի անբախտ դրութիւնը և պարզւէր նոցա օգնելու անհրաժեշտութիւնը: Պորա համաձայն՝ Կոմիտէի գործունէութեան առաջին քայլերը պիտի լինեն՝ հաւաքած փողերով բերել Թիւրքիայից հայ որբեր և գեղաւորել նոցա գերմանական ընդառնիքներում: Արձանագրութեան 4-րդ հէտը ասում է. «Կոմիտէի գործունէութիւնը չի լինելու կրօնազուրկ (interkonfessionell), այլ նա պիտի լինի աւետարանական (սրորազգումը բնագրինն է): Ժողովը պարզ արդայցիցում է նոյնպէս, որ նա հեռու է պահում իրան որ և է քաղաքական յետին նպատակներից: Նա ցանկանում է միայն քրիստոնէական սրբ մատուցանել խեղճ որբերին և անբախտներին: Գործունէութեան միջոցին, Կոմիտէն սրբակւեց մի քանի փոփոխութիւններ անել իւր դիրաւորութիւնների մէջ: Նոցա մասին կարդում ենք. «Մեծ դժւարութիւնները, որոնք կապած են երեխաների (Գերմանիա) բերելու հետ, վրանդը—զրկելնոցա իրենց ազգութիւնից,

բայց և նոցանից եւրոպացի չը շինելով..., վերջապէս այն համոզ-
մունքը, որ այդ երեխաները ամենից լաւ կը Դաստիարակւեն իրենց
սեփական երկրում և սորա օգտին, սովորեց ։ և այլն։ Այս կոմի-
տէի որբանոցի մասին (Վանում, Ղեկավարողը—Դր. Ռայնոլդս) կար-
դում ենք ուրիշ տեղ՝ «Երեխաները այնքեղ բոլորն էլ Դաստիարակ-
ւում են աւելարանական հաւափի մէջ»։ Եւ դեռ 1897թ. Էլզասի
կոմիտէի գործավարը, Խօսելով այդ որբանոցի համար մի գերմանական
ուսուցիչ ուղարկելու մասին, գրում էր. «... այսպիսով գուցէ կա-
րելի կը լինի հիմք դնել Էլզասեան առաքելութեանը Սրեւլքում»։²⁴

Պ. Ռոռբախը ինձ ասում էր, որ ինչպէս Դր. Ռայնոլդս, այն-
պէս և Էլզաս Լոթրինգի ճիւղ-կոմիտէն ամբողջ Հիֆսբունդի մէջ կա-
րող են ամենա-բոլոքականամոլը համարւել (և ես կաւելացնեմ, առ-
հասարակ Ֆրանկֆուրտի կենտրոնը, համեմարար Բերլինի կենդ-
րոնի հետ): Պ. Ռոռբախը կարծես թէ իրաւացի է. գոնէ աչքի է
ընկնում այն երեսովթը, որ Դաւանութեան վերաբերեալ կշռադա-
փութիւնները զՓնում ենք մենք գլխաւորապէս Էլզաս-Լոթրինգի
ճիւղ-կոմիտէի հարարատկութիւնների մէջ։ Վերջինիս Դաւանական
Դիբը սրիպեց մեզ առանձին ուշադրութիւն դարձնել նորա
կարձիքների վրաց Խնչ վերաբերում է Դր. Ռայնոլդսին, մենք օգոտ-
ւեցինք ամենից շար նորա գրւածքներից։ և Դորա համար ունեինք
երկու պարձառ. առաջին նա զրում է Դաւանական հարցի մասին
աւելի մանրամասն քան ուրիշները, և երկրորդ նորա համոզմունք-
ները այս կէտի վերաբերեալ շահեկան են, որպէս ամերիկական մի-
սիոնարի. իսկ սոքա աւելի բոլոքական կրօնամօլ են համարւում,
քան գերմանական բոլոքական միսիոնարները։ Այս հանդամանքները
փոքր ինչ նոր լոյս են զցում մեզ հետաքրքրող հարցի վրաց։

Ինկարի ունենալով այդ, կարծում եմ, որ աւելորդ չէ
նաև առաջ բերել Թիւրքիալի ամերիկական առաքելութեան, (Western Turkey Mission.ի), 1897թ., յուլիս Յ կայացրած
որոշումները։ Գլխաւոր կէտերը սոքա են. Փրկութիւնը Յիսուս
Քրիստոսի միջոցով միակ հիմքն է ճշմարիք կեանքի և ճշմարիք-
մրածողութեան համար։ Այդ նպագուակի համար օգուստում ենք մենք-

²⁴ Տես ծանօթ. 10, էջ 27-29.։

Աւելարանից, որը բոլոր քրիստոնեաների համար ընդհանուր հեղինակութիւն է կազմում, առանց հետեւելու որևէ առանձին դաւանութեան կրօնական ուսումնին, զգուշապէս խուսափելով այնպիսի հարցեր արծարծել, որոնք կարող են եկեղեցու մէջ բաժանումներ յառաջ բերել: Դէպի հայ լուսաւորչական եկեղեցին զգում ենք մենք ջերմ քրիստոնէական և սրբակից համակրութիւն, և ցանկանում ենք նորան ամեն բարգաւաճում: Սյու պատճառով մենք կարծում ենք որ հարկաւոր է ամենամեծ հոգս քաշել, որ հայ որբերը, որոնք թեպէտ և գեղաւորւած են որբանոցներում բողոքական հըսկողութեան դակ, այնուամենայնիւ հայեր մնան—լեզւի, սիրոյ մէջ Դէպի իրենց ժողովուրդը, անմիջական պատրաստութեան մէջ օգտաւէտ լինելու այն հասարակութեան, որին նորա պատկանում են:

«Ընդհանրապէս պիտի անկարելի համարել²⁵, որ կրօնական դասաւութիւնը որբանոցներում կատարվի լուսաւորչական եկեղեց. ցականների միջոցով եւ մեր հսկողութեան տակ: Դորա փոխարէն թոյլ է գուած այն երեխաներին, որոնց աղջականները այդ ցանկանում են, այցելել կիւրակի առաւօգները լուսաւորչական եկեղեցին, և յառուկ Դէպիքերում նաև հասարակ օրերը: Սյու եկեղեցու մէջ երեխաները կարող են անել այն, ինչ որ ցանկանում են իրենց քահանաները, և ոչ ոք չէ արգելու մնոցա ոչ խոսքովանութիւնը, ոչ էլ հաղորդութիւնը: Որբանոցների հսկողութեան գործում որ և է բաժանում կամ միացում առաքելութեան (միսութոնի) և լուսաւորչական եկեղեցականների հետ, այժմ՝ ոչ ցանկալի է, ոչ էլ հնարաւոր:»:

Ամերիկական առաքելութեան (Western Turkey Mission) այդ որոշումը ընդունակ է, կարծես, փոքր ինչ ցրել ընթերցողի կասկածները գերմանական բողոքականների վերաբերեալ Տաճկաստանում, մանաւանդ որ ամերիկական առաքելութիւնը, կրինում ենք, աւելի կրօնամոլ է համարւում, քան գերմանականը Արևելքում եւ քիչ է մնում որ լնթերցողը այն եղրակացութեան դայ թէ զգուցէ և ճիշդ է, որ Հիլֆսբունդը չի լեկավարւում իր գործունէութեան մէջ յետին բողոքական նպատակներով, արդէն

²⁵ Վերջին բոլոր քաղաքածքները,—որես ծանօթ. 10. էջ 30..

յաջորդ գողերը նորից ցրում են այդ կարճափել մալորութիւնը և նորից դնում են նորան. Իին գեսակէտի վերաբէ W. T. Mission-ի քերած որոշումների վերաբերեալ Դ.-ր Խռոբախը առում է. «Աս կարծում եմ, սոքա այն սկզբունքներն են, որոնց ի նկատի ունենալը երաշխաւորում է արդասաւոր չաջողութիւն որպէս ալետարանացման գործում, այնպէս էլ հայկական եկեղեցու համար մասնաւորապէս»^{26:} Բայց նոյն Դր. Խռոբախը, մի յօդւածում, խորագրած «Անչ պիտի ի նկատի ունենանք մենք հայերի համար գործունէութեան մէջ», և գողագրած Christliche Welt շաբաթաթերթում, առում է. «բողոքական առաքելութիւնը հայերի մէջ, ինքն ըստ ինքեան սխալ ձեռնարկութիւն է» (ist an sich ein verfehltes Unternehmen)^{26:}

Այսպիսի հակասութիւններով լի են Հիլֆսբունդի («Գերմանական ընկերութեան») կամ նորան համակրող գերմանացիների կը շատարութիւնները ուներմանական բողոքական միսահօնիս, յարաբերութեան մասին դէպի հայ լուսաւորչական եկեղեցին և մենք աշխատել ենք այս հարցի վերաբերեալ առաջ բերել այն քաղաքացները, որոնք հակասում են միմեանց։ Այդ է պատճառը, որ այնքան դժւար է սկզբից որոշ կարծիք կազմել, թէ որոնք են Հիլֆսբունդի ըոլոր ձգութմները։ Բայց հէնց այդ հակասութիւնների վերաբերմամբ կարելի է երկու ենթադրութիւններ անել, կամ Հիլֆսբունդը ինքը չըգիտէ հասրաւ թէ որ տեսակի են նորաձգութմները հայկական եկեղեցու վերաբերեալ, և այդ պատճառով նորագործիչների կարծիքները ամեն քայլափոխում հակասում են միմեանց, և կամ՝ այդ հակասութիւնները լոկ երեւութական են և այդպէս թւում են միայն կողմնակի մարդուն, որը չի ըմբռնած Հիլֆսբունդի գործիչների իսկական միգրը։ Եթէ առաջի ենթադրութեան հետազոտութիւնից յեպոյ գանք բացասական պատասխանի, այսինքն, որ գերման ընկերութիւնը ինքը պարզ չէ ըմբռնում իր նպատակները (որ դժւար երեակացնելի րան է), այն ժամանակ այդպիսի քննութիւնը գրեթէ ապարդիւն է դառնում, որովհետեւ այդպիսի եղբակացութիւն մեզ համար ոչ մի շահեկանութիւն չի կարող

²⁶ Խօսքը, ի հարկէ, ամերիկական որբանոցների մասին է՝ այսպես:

Ներկայացնել, այսօր-վաղը Հիլֆ բունդը կարող է պարզել իւր ձըգ-գութեանը, իսկ եթէ մենք համենք դրական պարասխանի, թէ «Օգնութեան միութիւնը ընդհակառակը ունի շար որոշ և պարզ նպատակներ՝ իւր գործի մէջ, ապա պիտի ընդունել որ նկարած հակասութիւնները երևութական են: Այդ պարզապով, մեր ցանկութեան մէջ լուծել, այսպէս ասած, Հիլֆսբունդի «Դաւանական պրոբլէմ», մենք կ'փորձենք քննել այս հարցը անմիջապէս երկրորդ ենթարութեան քեսակետից. կ'փորձենք ներդաշնակել այդ հակասութիւնները մի աւելի ընդհանուր գաղափարի տակ: Սա—յաջորդ անգամ, ուր սկզբից ցոյց կ'առանք թէ ո՞ր կողմից և ինչ յարձակումներ են եղել Հիլֆսբունդի վրայ և ինչպէս է նա պարասխաննել:

(Շարունակելի)